

Յակոբի վանքը եւ կը ծանօթանայ Պաղեստինի քրիստոնէաներուն: Կը ճամբորդէ Հոովմ ուխտի համար և այդ նպատակով 1012 ին կ'ստանայ Երուսաղէմի հայոց Արսէն պտրք. ի յանձնարարական նամակը, կը հասնի Մանտուայի վանքերէն մին, ուր կը վախճանի 1016 ին խստամբեր ճգնութենէ վերջ և կը թաղուի նոյն վանքին մէջ: Հոն կը պահուին արկղի մի մէջ հայազգի միայնակեացիին Հայաստանէն հետը տարած խաւազը, Սաղմուք եւ հայերէն Առեստրանը: Կ'ըսուի թէ՛ անոնց հետ կայ նաեւ հայերէն քուղի մը՝ հաւանաբար Արսէն պտրք.էն գրուած այն շրջաբերականը՝ որով պատրիարքը կը յանձնարարէր որպէսզի քրիստոնեաները խնամ տանին Սիմէոնին. որուն համար գրած է թէ Սիմէոն միայնակեաց հայ անապատական մըն է (Չառլ. Բ. 560—566). ընդարձակ կենսագրութիւնը տեսնել (Բագմ. 1884, փետր. և մարտ):

**ՍԻՄԷՈՆ ՊԵ.** — (1050—1109). կը յիշատակուի Մարինոս լատին պատմիչէն (Յպե. էջ 36): Հաւանաբար այս Սիմէոն պտրք.ն է որ Երուսաղէմի մէջ թարգմանած է անվաւերական Ադամ գիրքը հետեւեալ յիշատակարանին համաձայն. «Զոր թարգմանեաց հոգևոր տերն Սիմէոն՝ յԵրուսաղէմ»: Բաց ի կաթողիկոսէն, բարձրաստիճան եկեղեցականներն ևս կը կոչուին հոգևոր տեր. Ազամ գրքի թարգմանութեան ոճը նկատի առնելով ինչպէս նաեւ յիշատակարանը, հաւանական կը նկատենք թէ նոյն գիրքը Սիմէոն պտրք. թարգմանած է Ս. Յակոբի վանքին մէջ:

**ՍԻՄԷՈՆ ՍԱՂԻԱՆՅԻ.** — 1669 ին Ս. Յակոբի վանքին կը նըււիրէ ականակուռ ձեռաց խաչ մը, որ արժէքաւոր հնութիւն մը կը նկատուի:

**ՍԻՄԷՈՆ ՍՐԿ. ԹԻՖԼԻՉՅԻ.** — Մը. 1796 ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Պետրոս պտրք. Եւդոկիացիին կարգաւորած Շաքարակն Թախոից տետրակը:

**ՍԻՄԷՈՆ ՎՐԴ. ԱԼԱՇԿԵՐՏՅԻ.** — Մը. Լիմ Անապատի, կընիքը 1829: 1847 ին դասախօս ժառ. վարժի:

**ՍԻՄԷՈՆ ՎՐԴ. ԱՊՍՐԱՆՅԻ (Փոյր).** — Իր ծնողքն են Կարապետ և Ծովիկար (Հա. 1919. էջ 83): 1642 ին ուխտաւորու-